ՀԱՎԵԼՎԱԾ N1

08.08.2024թ.-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՆՈՐԴ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Երևան **28.08.2024թ.**

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00001182, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փող., 44/2 շենք) (այսուհետ՝ **Բանկ**), ի դեմս Վարչության նախագահի առաջին տեղակալ Արմեն Գառնիկի Հակոբյանի, ով գործում է ընկերության Վարչության նախագահ Կարեն Եղիազարյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա, մի կողմից, և «ԱՎՏՈ ԳԵԼԼՐԻ» Փակ բաժնետիրական ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02889819, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Արշակունյաց պ., 17) (այսուհետ՝ **Ընկերություն**), ի դեմս տնօրեն Գևորգ Հակոբի Գևորգյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով **Կողմեր**, կնքեցին սույն Հավելված N1 (այսուհետ՝ Հավելված) հետևյալի մասին.

«Գնորդ» - ֆիզիկական անձ է, ով վարկի մարման պահին 18-ից մինչև 63 տարեկան է, հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ, ով ցանկություն է հայտնել իր սեփական միջոցների և Վարկային միջոցների հաշվին Ընկերությունից գնել տրասպորտային միջոց:

«Վարկ» - Գնորդին տրամադրվող միջոցներ՝ տրասպորտային միջոցի արժեքի մի մասը վճարելու համար Գնորդի և Բանկի միջև կնքված վարկային պայմանագրով նախատեսված չափով և պայմաններով:

Սույն Հավելվածը հանդիսանում 08.08.2024թ.-ին կնքված **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ** անբաժանելի մասը: Հավելվածով Ընկերությունը տալիս է իր անվերապահ համաձայնությունը վարկի տրամադրման պահին սույն հավելվածով սահմանված զեղչատոկոսները Բանկի կողմից անակցեպտ գանձելու վերաբերյալ: Կողմերը պայմանավորվում են մատուցել համապարփակ ծառայություններ այն Գնորդներին, ովքեր մտադրություն են հայտնել իրենց սեփական միջոցների և Բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների (տարբերության մասով) հաշվին, ձեռք բերել Ընկերության կողմից վաճառքի ներկայացված տրանսպորտային միջոցները հետևյալ պայմաններով:

<table>
<tr><td>Ովքեր կարող են դիմել</td><td colspan="4">18 – 63 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 63 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու</td></tr>
<tr><td>Վարկավորման արժույթը</td><td colspan="4">ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>Վարկավորման գումար</td><td colspan="4">4,000,000 - 50,000,000</td></tr>
<tr><td>Վարկի մարման ժամկետը</td><td colspan="4">36 - 60 ամիս</td></tr>
<tr><td>Տարեկան տոկոսադրույքի տեսակը</td><td colspan="4">Հաստատուն</td></tr>
<tr><td>Վարկի մարման ժամանակացույց</td><td colspan="4">Անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ)</td></tr>
<tr><td>Վարկի ձևակերպման վայր</td><td colspan="4">• Ընկերության գործունեության վայր (առցանց վարկավորման համակարգի միջոցով)
• Բանկ (վարկային մասնագետի կողմից)</td></tr>
<tr><td rowspan="3">Տարեկան տոկոսադրույքներ</td><td></td><td colspan="2">Անվանական</td><td rowspan="2">Առավելագույն փաստացի</td></tr>
<tr><td></td><td>36 ամիս</td><td>37 – 60 ամիս</td></tr>
<tr><td>Եկամուտների հիմնավորմամբ</td><td>9.9%</td><td>11.9%</td><td>10.41% - 12.91%</td></tr>
<tr><td>Առանց եկամուտների հիմնավորման</td><td colspan="2">13.9%</td><td>15.05% - 15.20%</td></tr>
<tr><td rowspan="2">Համագործակցող ընկերության կողմից Բանկին վճարվող միանվագ զեղչատոկոսներ</td><td colspan="3">36 ամիս ժամկետով տրամադրով վարկեր</td><td>9.9%</td></tr>
<tr><td colspan="3">37 – 60 ամիս ժամկետով տրամադրով վարկեր</td><td>10.6%</td></tr>
</table>

Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում	
Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	• Ձեռք բերվող տրանսպորտային միջոցը • Որպես վաճառքի և գրավադրման արժեք հիմք է ընդունվում Ընկերության կողմից Բանկի էլեկտրոնային համակարգում կամ ներկայացված տեղեկանքում նշված արժեքը • Վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնող լիազոր մարմնի որոշմամբ կարող է պահանջվել ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորությունների առկայություն	
Կանխավճար	Եկամուտների վերլուծությամբ	Նվազագույնը՝ 10%
	Առանց եկամուտների վերլուծության	Նվազագույնը՝ 30%
Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ	
Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ	• Ավտոմեքենայի ձեռքբերման և գրավադրման հետ կապված պետական իրավասու մարմնում գրանցման վճարներ • Ծարժական գույքի գրավի հաստատման (ձևակերպման) միջնորդավճար համաձայն Բանկում գործող ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅՔՆԵՐ-ի: Առցանց վարկավորման համակարգի միջոցով տրամադրվող վարկերի դեպքում նշված միջնորդավճար չի կիրառվում	
Ապահովագրություն	• Տրանսպորտային միջոցի ԿԱՍԿՈ ապահովագրությունը կնքվում է յուրաքանչյուր տարի վարկի ամբողջ ժամկետի ընթացքում, վարկի մայր գումարի մնացորդի չափով, Բանկի կողմից և Բանկի հաշվին • Ապահովագրությունը վարկառուի կողմից և վարկառուի հաշվին կնքվելու դեպքում կիրառվում է նշված տոկոսադրույքից 0.9% ցածր տոկոսադրույք	
Այլ պայմաններ	Առցանց վարկավորման համակարգի կողմից մերժված և/կամ սույն հավելվածով սահմանված պայմաններից շեղումներով վարկային հայտերը կարող են դիտարկվել Բանկի տարածքում: Տվյալ դեպքում վարկավորման պայմանները սահմանվում են համապատասխան Լիազոր մարմնի որոշմամբ տվյալ պահին Բանկում գործող վարկավորման պայմանների համաձայն	

ԿՈՂՄԵՐ՝

ԲԱՆԿ՝

ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ Գլխամաս
Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության փ. 44/2
ՀՎՀՀ՝ 00001182
Պաշտոն. կայք՝ www.evoca.am
Էլ. փոստ՝ hello@evoca.am
Հեռ.՝ 374 10 605555
Վարչության նախագահի 1-ին տեղակալ՝
Արմեն Հակոբյան

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝

«ԱՎՏՈ ԳԵԼԼԵՐԻ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Արշակունյաց պ., 17
ՀՎՀՀ՝ 02889819
Էլ. Փոստ՝ gevorg.gevorgyan@auto-gallery.am
Հեռ.՝ 374 55 010222

Տնօրեն՝
Գևորգյան Գևորգ